



Քրոնիկոն


2

ԱԲՅ միացյալ հեռախոսահամար՝ 1-01



Առատ ձյուն եվրոպայում

3



Վախը խանգարում է, թե՞ օգնում

6



Զգուշացե՛ք թունավոր սնկերից

7



ով իրագրված է, նա լուրջորեն վաճառված է

Արտակարգ թերթ

N 42 (363)

3.12.2010 - 9.12.2010

www.emergency.am

«Համագործակցություն հանուն փրկության» մեդալը՝ ՀԱՊԿ ԱԻ նախարարներին

2010 թ. դեկտեմբերի 1-ին Մոսկվայում տեղի է ունեցել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի հերթական՝ երրորդ նիստը:

ՀԱՊԿ Արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի կազմում են՝ Ռուսաստանի Ղազնուքյան, Բելառուսի, Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի հանրապետությունների արտակարգ իրավիճակների հարցերը համակարգող նախարարները:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի անդրանիկ նիստը տեղի է ունեցել 2008 թ. սեպտեմբերի 12-ին Բիշկեք քաղաքում: Արտակարգ իրավիճակների համակարգող խորհրդի կազմում ստեղծվել է ՀԱՊԿ ԱԻՂԻՄ՝ արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման Աշխատանքային խումբ, որի կազմում են արտակարգ իրավիճակների հարցերը համակարգող փորձագետներ:

Որպես հիմնական փաստաթուղթ հերթական երրորդ նիստի քննարկման է դրվել Արտակարգ իրավիճակների կոլեկտիվ արձագանքման համակարգի ձևավորմանն ուղղված անդամ պետությունների աշխատանքային պլանի իրագործմանն ուղղված ծրագրերը: Այն համաձայնեցված է եւ կիսատատվի ՀԱՊԿ խորհրդի դեկտեմբերի 10-ի նիստում:

Պլանը հիմնական ծրագրային փաստաթուղթ կլինի մոտակա 2 տարիների համար:

Քննարկվել են նաեւ օրակարգային հետեւյալ խնդիրները՝ ՀԱՊԿ անդամ պետությունների արագ արձագանքման ուժերի եւ միջոցների գործողություններն ուղղված Ղրղզստանի Հանրապետությունում իրավիճակի կայունացմանը, ՀԱՊԿ անդամ պետությունների արտակարգ իրավիճակներին համատեղ արձագանքման ընթացքում համագործակցության կարգի (մեխանիզմի) եւ ընդհանուր սեղեկատվական-ծրագրային դաշտի ձևավորմանն ուղղված առաջարկությունները, ՀԱՊԿ անդամ պետությունների արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ վերացման բնագավառում լիա-

զորված մարմինների ստորաբաժանումների պատրաստման համար նախատեսված բազային պոլիգոնների հարցերը, կազմակերպական խնդիրներ:

Արձագանքման միասնական համակարգի ստեղծումը պետք է հիմնված լինի այդ ոլորտում առկա փորձի վրա, բայց, միեւնույն ժամանակ, համակարգի իրավական ապահովման համար գոյություն ունեցող իրավական հենքը բավարար չէ:

Նիստի ժամանակ նշվեց, որ ՀԱՊԿ հավաքական ուժերի կիրառման մեխանիզմն արտակարգ իրավիճակներին արձագանքման ժամանակ դեռ քիչ արդյունավետ է եւ համապատասխան միջոցառումներ են անհրաժեշտ, որոնք թույլ կտան առավելագույն կրճատել հայցադիմումից մինչեւ տուժած շրջան ուժերի ժամանման ժամանակը:

Ռուսաստանի Արտակարգ իրավիճակների նախարարությունն առաջարկեց ՀԱՊԿ անդամ երկրների վթարափրկարարական ուժերի միասնական ռեեստր ձևավորել:

Նախարարությունը՝ գործունեության այդ ուղղությամբ, ներկա-



յացում է հատուկ ռիսկի գործողությունների անցկացման «Լիդեր» 294-րդ կենտրոնը:

Ռուսաստանի ԱԻՆ-ը նիստի մասնակիցներին առաջարկեց դիտարկել նախարարության ուսումնական հաստատությունների հնարավորությունների օգտագործման հարցը՝ մյուս երկրներում արտակարգ իրավիճակներին արձագանքման մասնագետների պատրաստման համար:

Նիստի վերջում իր գործընկերների համար հաճելի անակնկալ էր պատրաստել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, որն իր գործընկեր-նա-

խարարներին պարգևատրեց ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության «Համագործակցություն հանուն փրկության» մեդալով:

Համակարգող խորհրդի հաջորդ նիստը նախատեսված էր անցկացնել նախագահող հաջորդ երկրում՝ Բելառուսում: Սակայն, Արմեն Երիցյանի առաջարկով, չորրորդ նիստը տեղի կունենա 2011 թ. սեպտեմբերին՝ Երեւանում: Հյուրերը կմասնակցեն նաեւ Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակցի օրվան նվիրված տոնակատարություններին:

Հայաստանին սպառնացող աղետները Երկրաշարժ

Մենք ապրում ենք երկրաշարժավտանգ գոտում, եւ սեյսմակայուն շենքերի կառուցումը մեզ համար օրակարգի խնդիր է: Հայաստանը հետխորհրդային այն երկրներից է, որը սեյսմակայուն շինարարության նորմեր է ընդունել, սակայն տեխնոլոգիաներն օրեցօր զարգանում են, եւ դրանք վերանայելու կարիք կա:

Ոլորտի հիմնախնդիրներին ու զարգացումներին էր նվիրված «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնում՝ ՀՀ-ում Համաշխարհային բանկի ներկայացուցչության աշակերտները կազմակերպված հանդիպում-քննարկումը, որին ներկա էին Հայաստանի մասնագետներ Քաղաքաշինության նախարարությունից, նախագծող ինստիտուտներից եւ շինարարական կազմակերպություններից, միջազգային կառույցներից:

Աշխատանքային հանդիպման նպատակն էր քննարկել ՀՀ-ի

աշակերտները «Աղետների ռիսկի նվազեցումը եւ արտակարգ իրավիճակների կառավարումը Հայաստանում» ուսումնասիրության արդյունքների հիման վրա արված առաջարկությունները:

Քննարկումից առաջ ներկայացրին համար ցուցադրվեց «Հաշտ ապրել աղետների հետ» տեսաֆիլմը, որը նկարահանված էր Համաշխարհային բանկի աշակերտները:

Տեսաֆիլմը դիտելուց հետո հանրապետությունում սեյսմակայուն շինարարության նոր մեթոդների կիրառման վերաբերյալ իրենց մոտեցումները ներկայացրեցին Սեյսմիկ պաշտպանության արեւմտյան ծառայության կառուցվածքների սեյսմակայունության կենտրոնի տնօրեն Զավեն Խլղաթյանը եւ Սեյսմակայուն շինարարության հայկական ասոցիացիայի նախագահ Սիբայել Մելքունյանը: Մասնագետների մոտեցումները բավական տարբեր էին: Զավեն Խլղաթյանը ներկայաց-

րեց դիմամիկակական մարիչների տեսական եւ կիրառական հետազոտությունների եւ քարե շենքերի սեյսմազիցման բարձրացման ժամանակակից մեթոդի տեսական եւ կիրառական հետազոտությունների արդյունքները:

Նա առաջարկեց քարե շենքերի սեյսմիկ ուժեղացումն ապահովել ներառված հիմնականախթի (կարկասի) միջոցով: Այս մեթոդը լայն կիրառում կարող է ունենալ հիմնականում ոչ բարձրահարկ քարե շենքերի սեյսմակայունությունն ապահովելու համար: Ընդ որում՝ այդ դիմամիկակական մարիչների օգտագործումը 2 բայով ավելացնում է շենքի սեյսմակայունությունը:

Սեյսմիկ աղետը եւ աշխատանք ունենալ քարե շենքերի համար այդ կոշտ համակարգը, որը կմեղմի երկրաշարժի ուժգնությունը եւ թույլ չի տա շենքերին քայքայվել, կլուծի նաեւ դրանց ջրամեկուսացման խնդիրը, - վստահ է հեղինակը:

>>> 4

«Էլիտ Գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն Էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ»՝ կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Եւ ստանալով առաջին բուժօգնություն՝ դուրս է գրվել:

Նոյեմբերի 28-ին՝ ժամը 07:43-ին տեղեկատվություն է ստացվել, որ ժամը 21:00-ի սահմաններում Ապարան-Աշտարակ ավտոճանապարհի 30-րդ կմ-ում (Ուշի գյուղի հարակից տարածք) տեղի է ունեցել ճՏՊ:

Դեռևս չպարզված հանգամանքներում «Վոլվո» մակնիշի «ՍԻԵՆԷ-182» պ/հ կցորդիչով բեռնատար ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի հատվածից եւ շրջվել, ինչի հետևանքով վարորդ Վալերի Իվանի Ստիմբանուն (ծնվ. 1966 թ., Մոլդովայի Հանրապետության քաղաքացի) ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Աշտարակ քաղաքի հիվանդանոց:

Բժիշկների կողմից տուժածի առողջական վիճակը գնահատվել է բավարար:

Ծխի պարճառով

Նոյեմբերի 29-ին՝ ժամը 09:20-ին տեղեկատվություն է ստացվել, որ ժամը 08:15-ի սահմաններում Երեւան քաղաքի Կոնստանտին Գրիգորյանի 23-րդ շենքի թիվ 163 բնակարանում հայտնաբերվել է Մաուրիկ Ներսիսյանի (ծնված 1959 թվականին) դին:

Նախնական տվյալներով մահվան պատճառ է հանդիսացել ծխախոտից բռնկված ներքնակի ծուխը: Հրդեհի վերաբերյալ ՄՓԿ ահազանգ չի ստացվել:

Դեկտեմբերի 1-ին՝ ժամը 17:16-ին ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ Արմավիրի մարզի Հայկական գյուղի 13-րդ փողոցի թիվ 5 տանը հայտնաբերվել է Կարապետ Հովհաննեսի Ջախյանի (ծնվ. 1971թ.) դին:

Դեպքի վայր է մեկնել ՄՄՏ տեսուչը: Նախնական տվյալներով Կ. Ջախյանը ծխախոտ է եղել, պատճառ է հանդիսացել կիսաայրված ներքնակի ծուխը:

Հրդեհի վերաբերյալ ՄՓԿ ահազանգ չի ստացվել:

Թունավորում

Նոյեմբերի 28-ին՝ ժամը 17:15-ին բնական գազից թունավորումով Գյումրի քաղաքի «Սամարիթեր» հիվանդանոց է տեղափոխվել Գյումրի քաղաքի Կամոյի փողոցի թիվ 3 տան բնակիչ Կարեն Կիրակոսյանը (ծնվ. 1989 թ.):

Ժամը 18:30-ին Կ. Կիրակոսյանը դուրս է գրվել հիվանդանոցից:

Նոյեմբերի 28-ին՝ ժամը 19:50-ին ստացվել է հաղորդագրություն, որ ժամը 18:30-ին ացետոնից թունավորումով Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոցային համալիր է տեղափոխվել Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի 12-րդ շենքի թիվ 19 բնակարանի բնակիչ Վարդան Պետրոսյանը (ծնվ. 1981 թ.):



Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվել է միջին ծանրության:

Ընկել է ջրավազանը

Նոյեմբերի 30-ին՝ ժամը 14:36-ին ահազանգ է ստացվել, որ Երեւան քաղաքի Ազատության պողոտայի եւ Ն.Ջառյան փողոցի խաչմերուկի հարակից տարածքում գտնվող դատարկ ջրավազանը կամրջակի վրայից պատանի է ընկել:



Հունամիտար օգնություն տեղափոխող ինքնաթիռը ուղեւորվում էր Սուդանի մայրաքաղաք Խարթում: Տեղական իշխանությունների հաղորդմամբ՝ օդանավն ընկել է Կարաչիի մերձակայքում՝ թռիչքից երկու րոպե անց: Ականատեսների վկայությամբ՝ ընկնելուց հետո ԻԼ-76-ը պայթել է եւ բռնկվել: Կրակը տարածվել է մերձակայքում գտնվող մի քանի շինությունների վրա:

Ավիաընկերության ներկայացուցիչների պնդմամբ՝ օդանավը գերազանց տեխնիկական վիճակում էր: Վթարի պատճառ կարող են լինել շարժիչում հայտնված թռչունները:

Պայթյուն քիմիական գործարանում

Նոյեմբերի 26-ին պայթյուն է որոտացել Զինաստանի Ներքին Մոնոլիթա ինքնավար մարզի քիմիական գործարանում: Վերջին տվյալներով՝ զոհվել է երեք մարդ, գործարանի եւս մեկ աշխատակից ստացել է վնասվածքներ:

Անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել ՓՈՒՎ ՀՓՋ 4-րդ հերթապահ խումբը:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը, քաղաքացիների ուժերով, մարմնական վնասվածքներով, ջրավազանից դուրս է բերվել Երիկ Դիելյանը (1985 թ. ծնվ.) եւ շտապօգնության ավտոմեքենայով տեղափոխվել Երեւան քաղաքի «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:

Ըստ հերթապահ բժշկի՝ Ե. Դիելյանի առողջական վիճակը ծանր է:

Հրդեհ

Նոյեմբերի 27-ին՝ ժամը 21:27-ին տեղեկատվություն է ստացվել, որ այրվում է մարզի Ուշի գյուղում կայանված բեռնատար ավտոմեքենայի անիվը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ, որը ժամը 21:35-ին, անհրաժեշտությունը վերանալու պատճառով, ճանապարհից հեռու է վերադարձվել:

Հրդեհը մարվել է տեղի ուժերով: Այրվել է «Վոլվո» մակնիշի «ՍԻԵՆԷ-182» պ/հ բեռնատար ավտոմեքենայի անիվը (վարորդ Վալերի Իվանի Ստիմբանուն):

Նոյեմբերի 28-ին՝ ժամը 14:52-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Մոսկովյան փողոցում տեղադրված Ա. Թամանյանի արձանի հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 15:00-ին, մարվել՝ ժամը 15:05-ին:

Մասամբ այրվել է մեկ ծառ:

Նոյեմբերի 29-ին՝ ժամը 16:09-ին ահազանգ է ստացվել այն մասին, որ հրդեհ է բռնկվել Քաջարան քաղաքի Պրոմիսիոնի քաղաքային գործարանի հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել >>>

միջազգային լուրեր

Այրվել է կայարանը

Նոյեմբերի 29-ին ուժեղ հրդեհը վնասել է Ստամբուլի գեղեցիկ վայրերից մեկը: Այրվել է քաղաքի գլխավոր կայարանը՝ Հայդար Փաշան: Կայարանը խոշորագույն երկաթուղային հանգույց է ողջ Մերձավոր Արեւելքում եւ պատմական հուշարձան է:



Բոսֆորի ափական ափին գտնվող ամրոց-կայարանը կառուցվել է ավելի քան հարյուր տարի առաջ՝ գերմանացի ճարտարապետների նախագծով:

Հրդեհը բռնկվել է տանիքում, որտեղ վերանորոգման աշխատանքներ էին ընթանում: Ըստ նախնական վարկածի՝ հրդեհի բռնկման պատճառը կարճ միացումն է եղել: Հրդեհից ոչ ոք չի տուժել. մարդկանց արագ տարահանել են, իսկ գնացքների երթևեկությունը դադարեց-

վել է: Կրակը հնարավոր է եղել վերահսկողության տակ առնել ծովի մոտ լինելու շնորհիվ: Հրշեջները ծովից ջուր էին վերցնում կրակը մարելու համար: Նշենք, որ կայարանը Ստամբուլը միացնում է ամբողջ Թուրքիայի հետ:

Այրվել է գյուղը

Նոյեմբերի 30-ին խոշոր հրդեհ է տեղի ունեցել Դադաստանի Ցիբարի գյուղում: Կրակը ոչնչացրել է գրեթե ամբողջ գյուղը, կանգուն է մնացել ընդամենը 17 տուն:

Բարձր լեռնային գյուղ հասնելու համար հրշեջ - մեքենաներից պահանջվել է մի քանի ժամ: Ըստ հրշեջների՝ ամբողջությամբ այրվել է մոտ 80 բնակելի տուն: Չոհեր եւ տուժածներ չկան:

Նախնական տվյալներով՝ հրդեհի բռնկման պատճառ կարող է լինել կարճ միացումը կամ կրակի հետ անզգույշ վարվելը:

Վթարվել է ԻԼ-76-ը

Նոյեմբերի 28-ի գիշերը Պակիստանում վթարվել է ռուս-ուկրաինական անձնակազմով ԻԼ-76 բեռնատար ինքնաթիռը: Վթարի հետևանքով զոհվել է 20 մարդ, նրանցից 8-ը անձնակազմի անդամներ են, մյուսները՝ տեղի բնակիչներ:

տակից ստացել է վնասվածքներ: Պայթյունի պատճառները եւ հանգամանքները ճշտվում են:

Ավտոպատահար Պերուում

Դեկտեմբերի 1-ին Պերուի հարավ-արևելքում իրար են բախվել զբոսաշրջիկների ավտոբուսն ու ցեմենտատար ավտոմեքենան: Պատահարի հետևանքով զոհվել է առնվազն 7 մարդ, եւս 25-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ Կոնտիկի ընկերության ավտոբուսը, որում եղել է 33 զբոսաշրջիկ, դարձել է անկառավարելի եւ բախվել



ցեմենտատարին: Հիվանդանոց տեղափոխված տուժածներից մի քանիսը ծանր վիճակում են:

Պատահարի հանգամանքները ճշտվում են:

Ֆաինա Թյունիբայան



«» մեկ մարտական հաշվարկ:
Հրդեհը մեկուսացվել է ժամը 16:50-ին, մարվել՝ ժամը 18:10-ին:
Այրվել է 2 հա խոտածածկ տարածք:

Նոյեմբերի 29-ին՝ ժամը 16:12-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Ագարակ քաղաքի Պղնձամուկիբեյի կոմբինատի ճաշարանի տանիքում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 17:22-ին, մարվել՝ ժամը 17:52-ին:

Այրվել է ճաշարանի տանիքը՝ 150 քմ:

Նոյեմբերի 29-ին՝ ժամը 21:39-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Սիլիկյան թաղամասի 5-րդ փողոցի թիվ 17 տունը սնուցող գազատար

խողովակում:
Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Դեպքի մասին տեղյակ է պահվել 1-04 ծառայությունը: Հրշեջ փրկարարների կողմից կատարվել են խողովակաշարի հովացման աշխատանքներ, իսկ գազի ծառայության աշխատակիցները վերացրել են վթարը:

Դեկտեմբերի 1-ին՝ ժամը 10:11-ին «Ջվարթնոց» միջազգային օդանավակայանից տեղեկատվություն է ստացվել, որ օդաչուները Ստեփանավան քաղաքից 20 կմ հյուսիս՝ սարերում, հրդեհի օջախ են նկատել:

Դեպքի վայր է մեկնել Ստեփանավան քաղաքի ՀՓՋ-ի հրամանատարը:

Տեղում պարզվել է, որ հրդեհի օջախը գտնվել է Սվերդլով գյուղի հարակից սարավանդին:

Տեղի բնակիչների հսկողությամբ այրվել է 5000 քմ խոտածածկ տարածք:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ՍՊԱԾ-ի դիտարկող կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցվել է վեց թույլ ստորգետնյա ցնցում: Դրանք տեղի են ունեցել նոյեմբերի 29-ին տեղական ժամանակով ժամը 19:51-20:45 միջակայքում Ջերմուկ քաղաքից 10 կմ հյուսիս-արևելք: Սեյսմիկ ցնցումների ուժը (մագնիտուդը) եղել է M=1.4-2.4, առավելագույն ուժգնությունը (ինտենսիվությունը) եղել է I=3 բալ: Ամենաուժեղ սեյսմիկ ցնցումը (ժամը 20:22, M=2.4, I=3 բալ) գրանցվել է Ջերմուկ քաղաքում, Գնդեվազ եւ Կեչուտ գյուղերում:

տեղի է ունեցել 3 բալ ուժգնությամբ թույլ երկրաշարժ: Նոյեմբերի 28-ին Վրաստան-Ռուսաստան սահմանային գոտում՝ վրացական Քվարելի քաղաքից 12 կմ հյուսիս-արևելք, գրանցվել է երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3-4 բալ:

Տարածաշրջանից դուրս.
6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է երկու երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան հրե օդակայանի արեւելյան ափամերձ տարածքում՝ Բոնին կղզիների շրջակայքում, գրանցվել է 6.8 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որն զգացվել է երկրի կենտրոնական եւ արեւելյան հատվածներում: Մայրաքաղաք Տոկիոյում մի քանի բարձրահարկ շենք ճոճվել է, խուճապի մատնված բնակիչները դուրս են եկել շենքերից: Դեկտեմբերի 1-ին Ֆիջի կղզիների ափամերձ գոտում տեղի է ունեցել երկրաշարժ, որն ունեցել է 6.1 մագնիտուդ: Երկրաշարժերը ցունամի չեն հարուցել, զոհեր եւ ավերածություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

Առաք ձյունը կաթվածահար է արել օդային հաղորդակցությունը Եվրոպայում

Եվրոպայի մի շարք երկրներում ձյան առատ տեղումներն ու անսովոր ցուրտ եղանակը կաթվածահար են արել խոշորագույն օդակայանների աշխատանքը, ինչպես նաեւ խոչընդոտել ավտոտրանսպորտի ու գնացքների երթուղիները:



Բրիտանիայում ձյան սկիզբը ամենացուրտն է համարվել սկսած 1993-ից: Անգլիայի արեւելյան հատվածում ու Շոտլանդիայում օդի ջերմաստիճանը հասել է մինչեւ -20 աստիճանի. սառցածածկույթն ու ձյան տեղումները խափանել են երկաթուղային հաղորդակցությունն ու դարձել մայրուղիների վրա ճՏՊ-ների պատճառ: Մեծ Բրիտանիայում գազի սպառումը մեկ օրում 5%-ով ավելացել է. օդերեւութաբանների համաձայն՝ այստեղ ցուրտ եղանակը կպահպանվի մոտ 2 շաբաթ: Ֆրանսիայի Էր եւ Լուար բնակավայրերում օդի ջերմաստիճանը ռեկորդ է սահմանել մինչեւ 16,8 աստիճան ցուրտ: Ավելի վաղ հաղորդվել էր, որ 25 հազար տուն գրկվել է էլեկտրականությունից: Առատ ձյուն է տեղացել նաեւ Իսպանիայի եւ Պորտուգալիայի որոշ շրջաններում:

Դեկտեմբերի 1-ին Լոնդոնի, Վարշավայի, Էդինբուրգի, Մյունխենի եւ Ամստերդամի օդանավակայաններում հարյուրավոր թռիչքներ են հետաձգվել: Ֆրանկֆուրտի օդակայանում միայն հետաձգվել է 300 ավիաչվերթ: Լոնդոնի ուղեւորներին խորհուրդ է տրվում նախապես ճշտել՝ արդյո՞ք չի հետաձգվել իրենց չվերթը: Վարշավայում առատ ձյան հետեւանքով կոմունալ ծառայություններն ստիպված են յուրաքանչյուր 15 րոպե մեկ անգամ մաքրել փողոցները, իսկ Գերմանիայի որոշ հատվածներում ձնածածկույթի բարձրությունը հասնում է 60 սմ-ի. երկրի հյուսիսային հատվածի դպրոցներում հետաձգվել են դասերը:

եղանակի տեսություն

Նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 1-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Այդ ընթացքում դիտվել է առանց տեղումների եղանակ: Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Սյունիքի հովիտներում՝ +21... +24 °C, Տավուշում եւ Արցախում՝ +19... +23 °C, Սյունիքի նախալեռներում եւ Լոռիում՝ +17... +20 °C, Արարատյան դաշտում՝ +16... +18 °C, լեռնային շրջաններում՝ +10... +15 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ -1... -6 °C (Աւետանում՝ 1 °C, Աշոցքում՝ -8 °C), Արարատյան դաշտում, Սյունիքի նախալեռներում եւ Արցախում՝ -2... +3 °C (Սիսիան՝ -5 °C), Տավուշում՝ +1... +4 °C, Սյունիքի հովիտներում՝ +2... +6 °C:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում դեկտեմբերի 3-ից 7-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավային՝ 3-8 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 3-ին 6-8 աստիճանով կբարձրանա: Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 2-ի գիշերը կտատանվի Տավուշում՝ +5... +10 °C, Լոռիում՝ 0... +5 °C, Շիրակում՝ 0... -5 °C, Կոտայքում՝ 0... +3 °C, Արագածոտնի լեռներում՝ +2... -5 °C, Արագածոտնի նախալեռներում՝ +2... +5 °C, Արարատյան դաշտում՝ 0... -2 °C, Վայոց Ձորի լեռներում՝ -1... -3 °C, Վայոց Ձորի նախալեռներում՝ 0... -2 °C, Սյունիքի հովիտներում՝ +5... +10 °C, Սյունիքի նախալեռներում՝ +3... +6 °C, Սիսիանում՝ -3... -5 °C, Արցախում՝ +5... +10 °C աստիճանի սահմաններում: Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 2-ի ցերեկը կտատանվի

Վի Տավուշում՝ +10... +15 °C, Լոռիում՝ +9... +14 °C, Շիրակում՝ +10... +13 °C, Կոտայքում՝ +10... +13 °C, Արագածոտնի լեռներում՝ +10... +13 °C, Արագածոտնի նախալեռներում՝ +16... +18 °C, Արարատյան դաշտում՝ +16... +18 °C, Վայոց Ձորի լեռներում՝ +10... +13 °C, Վայոց Ձորի նախալեռներում՝ +16... +18 °C, Սյունիքի հովիտներում՝ +11... +16 °C, Սյունիքի նախալեռներում՝ 8... +13 °C, Սիսիանում՝ +13... +15 °C, Արցախում՝ +11... +16 °C աստիճանի սահմաններում: Երեւանում դեկտեմբերի 3-ից 7-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: Օդի ջերմաստիճանը դեկտեմբերի 3-ի գիշերը ցածրադիր շրջաններում կտատանվի 0... -20 °C, բարձրադիր շրջաններում՝ +5... +7 °C, ցերեկը՝ +14... +16 °C աստիճանի սահմաններում:

Միանանք հանուն հավասար հնարավորությունների

Գրում են ընթերցողները

«Հուլիսի Կամուրջից»-ից մեր դպրոց եկան երկու աշխատակիցներ եւ ինձ ու իմ օգնականներին տվեցին «Միանանք հանուն հավասար հնարավորությունների» ակցիայի թերթիկները, որոնք պետք է իրազեկեին բոլորին՝ եւ՝ փոքրերին, եւ՝ մեծերին՝ միանալու հանուն հավասար իրավունքի: Աշխատանքը բավական բարդ էր. քանզի անհրաժեշտ էր չվիրավորել մարդկանց, ցավ չպատճառել: Իրերի բերումով ես էլ սահմանափակ կարողությունների տեր եմ եւ ուզում եմ, որ համայնքի մարդիկ սիրեն ու հարգեն բոլոր այդպիսի մարդկանց, որոնք ամենաշատը կարիք ունեն սիրո եւ քնքշանքի: Ամենադժվարը անվասայլակին գամ-

ված Անդրանիկին բացատրելն էր, որովհետեւ նա չի կարողանում շփվել մարդկանց հետ: Ես ու փոքրիկ Տիգրանիկն աշխատեցինք առանց ավելորդ լարվածության բացատրել եւ հանձնել թերթիկը: Աշխատանքն ավարտելուց հետո բոլորս ուզում ենք, որ Անդրանիկը ստանա համապատասխան օգնություն եւ աջակցություն. չէ՞ որ, այնքան հեշտ է մարդկանց ուրախություն պարզելը: Մենք ուրախ էինք, որ իրազեկեցինք մարդկանց իրենց խնդիրների մասին եւ միաժամանակ գոհ էինք, որ մեր երկրում սիրում են այդպիսի մարդկանց, եւ դուրս է մղվում «ավելորդության» գաղափարը: Աստված մեզ պահպան: **Մարիամ Եսայան**
Չինչինի միջն. դպրոցի
11-րդ դասարանի աշակերտուհի

մասնագետի անկյուն



«Մեր գործունեությունը Ձեր անվտանգության երաշխիքն է...»

«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2007 թ.: Այն իրականացնում է զագասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման աշխատանքներ: Ընկերությունն իր գործունեության շուրջ երեք տարիների ընթացքում ձեռնարկել է գործուն մեխանիզմ՝ ապահովելով զագասպառման ներուցային համակարգերի անվտանգ շահագործման սպասարկումը 33-ում:



AEG-SERVICE

«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ն իր գործունեությունն իրականացնում է 33 ողջ տարածքում գործող 17 ԳՅՍՍԸ-ների (զագասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայություն) և 28 տեղամասերի միջոցով: Ընկերության ծառայություններից օգտվում են ավելի քան 600 000 բնակիչ՝ բաժանորդներ, 6500 կենցաղային սպառում ունեցող կազմակերպություններ, որոնք թվում են շուկայում հայտնի խոշոր կազմակերպություններ, հանրային օբյեկտներ, առողջապահական հիմնարկներ և այլն:

Գագասպառման ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկումը հստակ մշակված գործընթաց է: Սպասարկումն իրականացվում է միայն պայմանագրի առկայության դեպքում: Հատուկ ուշադրություն է դարձվում տեխնիկական պայմանների առկայությանը, տեղադրված զագասարքերի տեսակի և քանակի համապատասխանելիությանը նախագծին, ստուգվում է զագասարքերի հետագա շահագործման պիտանելիությունը: Բացի ընկերության կողմից հաստատված ժամանակացույցով կատարվող պլանային ստուգումներից, կատարվում է նաև լրացուցիչ սպասարկում՝ ըստ բաժանորդների կողմից ներկայացված հայտերի: Ընկերության աշխատակցի կողմից տեխնիկական սպասարկման ժամա-

նակ զագահամակարգում հայտնաբերված ցանկացած թերության վերաբերյալ պարտադիր կազմվում է համապատասխան ակտ, եւ այն վերացնելու համար բաժանորդին հնարավորություն ու ժամանակ է տրվում: Կազմված ակտերը միանշանակ միտված են սպառողի կյանքի անվտանգության պահպանմանը:

Եթե զագահամակարգում խախտված են տեխնիկական պայմանները եւ հետագա շահագործումը կարող է դժբախտ պատահարի պատճառ դառնալ, ապա ելնելով բաժանորդի, նրա շրջապատի եւ հարեւանների անվտանգությունից, կատարվում է համակարգի զագազրկում: Բնական զագի անվտանգ օգտագործման առաջին նախապայմանը նրա լրիվ այրման եւ ծխազագերի հեռացման կազմակերպումն է, որի համար պարտադիր նախապայման է մաքուր օդի ներհոսքը եւ նորմերին համապատասխանող ծխաօդատար ուղիների առկայությունը: Ըստ վիճակագրական տվյալների՝ կենցաղում տեղի ունեցած դժբախտ պատահարների գերակշիռ մասը տեղի է ունեցել բնական զագի լրիվ այրման համար անհրաժեշտ մաքուր օդի ներհոսքի բացակայության եւ նորմերին չհամապատասխանող ծխաօդատար ուղիների շահագործման պատճառով, ուստի ծխաօդատար ուղիների պահանջվող նորմերի համապատասխանեցման, քարշի ապահովման համար անհրաժեշտ է լինում գործի դնել հուսալի եւ արդյունավետ տեխնիկա: Կապույտ վառելիքի օգտագործման ժամանակ անվտանգության ապահովման նպատակով անընդհատ թարմացվում են աշխատանքային գործիքներն ու միջոցները:

«Էյ-Ի-Ջի Սերվիս»-ը համալրված է ծխաօդատար ուղիների փախուղիչման եւ մաքրման ժամանակակից արտասահմանյան սարքավորումներով: Ծառայությունը ժամանակին եւ որակով կատարելու համար ընկերությունը ձեռք է բերել արդիական հոսաորոնիչներ եւ փախուղիչման նորագույն սարքեր ու սարքավորումներ, այդ թվում՝ ժամանակակից

վակուումային սարքավորումները, գրպանի մոնոմետրերը, որոնցով աշխատում են ընկերության մասնագետները: Մշտապես համալրվում է նաև ընկերության ավտոտրանսպորտային բազան:

«Էյ-Ի-Ջի Սերվիս»-ում աշխատում է ավելի քան 1000 մասնագետ եւ ընկերության աշխատակազմի համալրումը նոր, բարձր որակավորում ունեցող մասնագետներով շարունակական է: Ընկերությունում սպասարկում իրականացնող մասնագետներն ընտրվում են հատուկ որակավորման թեստով: Բացի մասնագիտական գիտելիքների իմացությունից, սպասարկող անձնակազմը պարտավոր է լինել բարեկիր: Բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից պարբերաբար անցկացվում են վերապատրաստման, որակավորման բարձրացման դասընթացներ, որոնց ընթացքում աշխատողները ծանոթանում են իրենց գործունեությանն անհրաժեշտ տեխնիկական հմտություններին:

Ընկերությունն ունի ինտերնետային կայք՝ www.aegservice.am, ուր գետնեղված է տեղեկատվություն թե՛ ընկերության, թե՛ զագասպառման համակարգերի տեխնիկական սպասարկման վերաբերյալ: Առցանց կապի միջոցով հնարավոր է ստանալ զագի շահագործման հետ կապված տեղեկություններ, ինչպես նաև՝ առցանց կանչ գրանցել: Ընկերությունում անվտանգության երաշխիք է համարվում բնակչի համար մշտապես հասանելի լինելու հանգամանքը: Ընկերությունում խիստ կարեւորվում է լրատվամիջոցների եւ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը, որը զագասպառողին իրազեկելու ամենաուղիղ ճանապարհն է: Ձանգվածային լրատվամիջոցների, զովագրային վահանակների, հանրային իրազեկմանը նպաստող այլ աղբյուրների միջոցով ընկերությունը մշտապես բաժանորդների շրջանում զագից անվտանգ օգտվելու վերաբերյալ իրահանգավորում է իրականացնում: Գագասպառող բնակչության շրջանում զագասարքերի տեղադրման պայմանների, ծխաօդա-

տար ուղիներն աշխատունակ պահելու վերաբերյալ պարտադիր իրահանգավորում են իրականացնում նաև ընկերության փակամագործները:

Հայաստանն առաջինն է ԱՊՀ երկրների ցանկում, որտեղ տեխնաժին աղետները կանխելու նպատակով իրականացվում է անվտանգության համակարգերի զանգվածային տեղադրում: Երբ բնակարանի ազդանշանային սարքը գործում է եւ բնակիչն ահազանգվում է, բնակարան ներկայացող մասնագետներն այս սարքի միջոցով տեղում կարող են որոշել ազդանշանի պատճառը: Անսարքության բացահայտման դեպքում



անվտանգության համակարգը փոխարինվում է նորով, իսկ վնասված սարքը բերվում է ծառայությունների կենտրոն՝ ստուգման եւ ամրաժեշտության դեպքում՝ վերանորոգման համար: Ազդանշանային սարքի կառուցվածքը ներառում է ինչպես նաև համակարգ (սեւ արկղ), որտեղ տվյալները պահպանվում են 25 ժամ: Այսինքն մասնագետը, ներկայանալով բնակարան, կարող է աշխատանքային համակարգի համապատասխան ծրագրի միջոցով ազդանշանային սարքից կարդալ, թե ինչ խնդիր է առաջացել բնակարանում: Սարքերը հուսալի են, մինչ օրս ոչ մի կեղծ ազդանշան չի գրանցվել, բազմաթիվ հնարավոր դժբախտ պատահարներ են կանխվել ազդանշանային սարքերի աշխատանքի շնորհիվ:

- Շատ կարեւոր է, որ ժամանակ առ ժամանակ գալիս եւ ստուգում են: Մենք պրոֆեսիոնալ չենք եւ շատ բան չգիտենք, իսկ ստուգումը կարեւոր է անվտան-

գության համար: Ասեմ, որ մեր հարեւանի մոտ այդպիսի դեպք էր եղել, երբ արտահոսքի ժամանակ իրենք քնած են եղել: Պատկերացնում եք՝ ինչ կլիներ ոչ միայն նրանց, այլ նաև մեր ընտանիքի հետ, եթե ազդանշանային սարքը չհայտնաբերեր զագի արտահոսքը: Այնպես որ, մենք շատ ենք գնահատում «Էյ-Ի-Ջի Սերվիս» ընկերության ծառայությունները, քանի որ մեզ շատ ապահով ենք զգում, - ասում է զագասպառող բաժանորդներից մեկը:

Գործընթացը շարունակական է եւ ներառելու է զագասպառող բոլոր բաժանորդների բնակարանները:


«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ պատասխանատուներն ասում են, որ իրենք որդեգրել են ռազմավարություն, համաձայն որի զագասպառման համակարգերի բարեխիղճ սպասարկմանն ու շահագործմանն ուղղված կոշտ մոտեցումը պետք է երաշխավորի բաժանորդի անվտանգությունը:

Բացի այդ, «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ն, հանդիսանալով «Էմ Վի Վի դեկոր» Ջի Էմ Քի Էյջ, «Էմ Վի Վի Էներջի» Էյ Ջի ՍՊԸ ընկերությունների Կոնսորցիումի կողմ, ստանձնել է «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-Ջրմուղկոյուղի», «Նոր Ալյունք» ՓԲ ընկերությունների կառավարումը, իրականացնում է իրավաբանական անձանց սպասարկման ծառայություններ: Հանդիսանալով չեխական «THERMONA» ընկերության պաշտոնական գործընկերը՝ սպառողներին է առաջարկում եվրոպական հայտնի ապրանքանիշների բարձրակարգ տեսակաճու մեծ ընտրանի, իսկ 2010 թ. մարտ ամսից սկսել է գործել «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ Անվտանգության համակարգերի եւ միջոցների տեխնիկական սերվիս-կենտրոնը:

«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի գործունեությունն ու աշխատանքի որակը փաստում են, որ այն նոր, սակայն աճի ու զարգացման կայուն հեռանկար ունեցող կազմակերպություն է, որի նպատակը բնական զագի անվտանգ օգտագործման ապահովման միջոցով մեր հարմարավետության ու պաշտպանվածության իրաշալի գագացումի ապահովումն է:

Հայաստանին սպառնացող աղետները Երկրաշարժ

«**1**» Հ ա ն դ ի պ մ ա ն մ ա ս ն ա կ ի ց ն եր ն ընդգծեցին, որ սա ճիշտ մոտեցում է, սակայն չկա հետեւողականություն այն կյանքի կոչելու համար: Կարծիք հնչեց նաև, որ այս տեխնոլոգիայի օգտագործումն ընդունելի է երկրակեղևի ներդաշնակ, այլ ոչ թե քառասային տատանումների ժամանակ, ինչը բնորոշ է Հայաստանին:



զբաղվում է արդեն 17 տարի, եւ այդ ընթացքում սեյսմամեկուսիչների կիրառմամբ հանրապետությունում արդեն կառուցվել, կառուցման ընթացքի մեջ է կան

ապնդվել է 36 շենք: Համեմատության համար նշենք, որ ճապոնիայում ներկայումս կա 10 հազարից ավելի այդպիսի շենք, իսկ հսկայական Չինաստանում՝ 1000:

Այս ընթացքում Հայաստանում արտադրվել է 4154 սեյսմամեկուսիչ, որի գինը կազմում է 54 մլն 345 հազար դրամ:

Նրա խոսքով, այդ տեխնոլոգիայի օգտագործումը թույլ կտա ամրացնել շենքի սեյսմակայունությունը մինչև 9 բալ տատանումների ժամանակ, ինչպես նաև խուսափել դեֆորմացիայից: Ընդ որում, սեյսմամեկուսիչները կիրառելի են ոչ միայն ցածրահարկ, այլև բարձրահարկ շենքերի համար: Դրա վառ օրինակն է ներկայումս այս տեխնոլոգիայի կիրառմամբ Երեւանում 17-հարկանի բիզնես-կենտրոնի կառուցումը, որը եվրոպայում համարվում է ամենաբարձր սեյսմամեկուսացված շենքը, իսկ աշխարհում՝ երրորդը (այստեղ առաջատար է համարվում ճապոնիան):

Մ. Մելքոնյանը «Արտակարգ թերթի» հետ զրույցում նշեց, որ

Սպիտակի երկրաշարժի ուժգնությանը ցնցումի դեպքում Երեւանում կքանդվի շինությունների մոտ 80 տոկոսը, իսկ գոհերի թիվը կհասնի 300 հազարի: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սեյսմամեկուսիչների լայն կիրառումը հանրապետությունում, եւ, առաջին հերթին, պետական կառույցներում, դպրոցներում ու հիվանդանոցներում:

Նա տեղեկացրեց, որ արդեն համապատասխան ծրագիր է ներկայացված կառավարություն: Սեյսմակայուն շինարարության խնդիրը պետք է լինի կառավարության ուշադրության կենտրոնում, քանի որ այն անմիջականորեն առնչվում է մարդկանց կյանքի անվտանգության հետ, եւ դրա անտեսումը կարող է բերել անդառնալի կորուստների:

Տիգրան Գովհաննիսյան

Լուզիտանիայի կործանումը

1915 թվականի մայիսի մեկին Նյու Յորքից Եվրոպա ուղևորվող Լուզիտանիա օվկիանոսային լայների վրա երեւաց աշխարհի գրեթե ամենահարուստ մարդը՝ Ալֆրեդ Վանդերբիլթը: Նավահանգստում հավաքված հետաքրքրասերները տեսան, թե ինչպես Վանդերբիլթին մոտեցավ ցրիչը՝ հարգանքով փոխանցելով մի հեռագիր: Այնտեղ գրված տեքստը շատ տարօրինակ էր, իսկ հեռագիրը, բնական է, առանց ստորագրության. «Որոշակի աղբյուրներից հայտնի է, որ Լուզիտանիան տորպեդահարվելու է: Անմիջապես հետաձգեք ճանապարհորդությունը»: Բայց ո՛չ, Ալֆրեդ Վանդերբիլթը չէր կարող հավատալ, որ կգտնվի մի նավ կամ թեկուզ սուզանավ, որը կարող է սասանել «Ատլանտիկայի հպարտությունը»:

Իսկ Լուզիտանիան իրոք Ատլանտիկայի հպարտությունն էր, չէ՞ որ 1907 թվականին այն ստացավ աշխարհի ամենաարագընթաց նավ կոչվելու իրավունքը՝ արժանանալով «Ատլանտիկայի կապույտ ժապավեն» մրցանակին: «Ժապավենը» տրվում էր Լոնդոն-Նյու Յորք ուղիով Ատլանտիկ օվկիանոսն արագորեն անցնելու համար: Կեց հազար կիլոմետր անցնելու համար Լուզիտանիային պահանջվեց ընդամենը չորս օր, 19 ժամ եւ 52 րոպե:

Բացի այդ, բոլորին հայտնի էր հետեւյալ փաստը: Առաջին աշխարհամարտի սկզբին գերմանական մի հաճախակի փորձեց գավթել Լուզիտանիան: Գերմանացիները, վստահ լինելով իրենց նպատակի հաջողության մեջ, ռադիոյով հրամայեցին նավի հրամանատարին. «Նավը գավթված է, հետեւե՛ք մեզ»: Բայց այդ հրամանին Լուզիտանիայի նավապետը պատասխանեց շատ պարզ գործողությամբ. նավը զարգացրեց առավելագույն արագությունը եւ պարզապես անհետացավ գերմանական հաճախակի տեսադաշտից:

Շատերը համոզված էին, որ նավը լիովին անվտանգ է անգամ պատերազմի ժամանակ, ուստի Լուզիտանիայի ծառայություններից մշտապես օգտվում էին հայտնի եւ ունեւոր մարդիկ: Վանդերբիլթը տեղավորվեց հարմարավետ նավասենյակում ինչ-որ մեկի անհաջող կատակ համարելով չարաբաստիկ հեռագիրը:

Սակայն արտասովոր նախագուշացում էր ստացել ոչ միայն ամերիկացի միլիոնատերը: Նյու Յորքի որոշ թերթերի առավոտյան համարներում, վերջին էջի վրա, սեւ շրջանակի մեջ գետնորված էր հետեւյալ նախագուշացումը.


«Բոլոր ճանապարհորդողներին եւ Ատլանտիկան անցնել ցանկացողներին հիշեցվում է, որ Գերմանիան եւ նրա դաշնակիցները պատերազմի մեջ են Մեծ Բրիտանիայի եւ

նրա դաշնակիցների հետ: Ռազմական գործին ընդգրկում է այն շրջանները, որոնք սահմանակից են Բրիտանական կղզիներին, եւ ըստ պաշտոնական նախագուշացման Մեծ Բրիտանիայի կամ նրա դաշնակիցների դրոշի տակ շարժվող նավերը նշված ջրերում ենթակա են ոչնչացման:

Գերմանիայի կայսերական դեսպան, Վաշինգտոն, 22 ապրիլի, 1915 թ.»:

Բայց այս նախագուշացումը շատերի կողմից ուղղակի անտեսվեց: Մայիսի մեկի երեկոյան Լուզիտանիան պատրաստվում էր նավարկության: Ավարտին էր մոտենում բեռների եւ փոստի տեղավորումը, լայների տախտակամած էին բարձրանում վերջին ուղևորները: Ընդհանուր առմամբ նավում կար 1257 ուղևոր, այդ թվում՝ 129 երեխա եւ անձնակազմի 702 անդամ:

Հարմարավետության առումով Լուզիտանիան կատարելության մարմանավորում էր: Այստեղ կային դայակներով եւ բժիշկներով



րով հատուկ սենյակներ՝ նախատեսված երեխաների համար, վերելակներ, իրենց տերերի հետ ճանապարհորդող շների եւ այլ տնային կենդանիների համար սրահներ, հեռախոսներ եւ էլեկտրական ազդանշանային լամպեր, առանձին սենյակներ աղախիճներին եւ սպասավորների համար: Կարմիր փայտից պատրաստված կամարածե դռները, թանկարժեք մոմակալները, կախովի «ձմեռային» այգիներն ու արմավենիները մոդեռն ոճի մթնոլորտ էին հաղորդում նավին: Եվ միայն ծյուրած տախտակամածի, ներկերի եւ մեքենայի յուղի թեթեւ հոտը հիշեցնում էր, որ այնուամենայնիվ Լուզիտանիան նավ է:

Եվ ահա Լուզիտանիան լքեց Նյու Յորքը: Նավը դեկավարում էր Անգլիայի լավագույն նավապետներից մեկը համարվող Ուիլյամ Թերները: Նրան ծանոթ էին Ատլանտիկայի բոլոր կղզիները, դժվար անցանկելի վայրերը, եւ հիմա Թերները հանգիստ դիտարկում էր օվկիանոսի փայլող մակերեսը: Նավապետը համոզված էր, որ Լուզիտանիային ոչինչ չի սպառնում:

Եվ իրոք, նավարկության առաջին վեց օրերն անցան հանգիստ եւ բարեհաջող: Մայիսի 7-ի առավոտյան Լուզիտանիան մոտենում էր Իռլանդիայի հարավ-արեւմտյան սահմաններին: Յուրաքանչյուր հինգ րոպեի

մեկ նավը փոխում էր իր կուրսը՝ տասն աստիճանով հեռանալով մեկ աջ, մեկ ձախ կողմը: Թերները գիտեր, որ նման ոլորագծերը գերմանական սուզանավի հարձակման դեպքում կխոչընդոտեն նշանառու կրակի բացմանը: Նա նաեւ գիտեր, որ ջրի տակ գտնվող ոչ մի նավ կվիճակի չէ հասնել Լուզիտանիային:

Ծովը հանգիստ էր, փշում էր թեթեւ քամի: Կեսօրվա ճաշից հետո ուղևորներն սկսեցին գնալ իրենց սենյակները: Նրանք չգիտեին, որ հենց այդ պահին, ժամը 14.10-ին, ծովին հետեւող նավաստիներից մեկը հեռախոսով զեկուցեց նավապետին «Աջ կողմից տորպեդ է»: Թերները հասցրեց միայն մեկ քայլ անել, վայրկյաններ անց տորպեդը մխրձվեց նավի մեջ, եւ հարվածի ու պայթյունի աղմուկը տարածվեց մի քանի մղոն: Նավն անմիջապես սկսեց թեքվել ու միեւնույն ժամանակ առաջամասով սուզվել ջրի մեջ:

Լուզիտանիայում ոչ ոք չէր կարող հստակ ասել, թե ինչ վնասներ է հասցրել թշնամու հարվածը: Ուղևորներին խլացրած պայթյունին հետեւեց երկրորդը՝ ավելի ուժեղ եւ սարսափելի: Այս երկրորդ պայթյունի մասին պատմաբանները վիճաբանում են մինչ այսօր: Գերմանական սուզանավի հրամանատարը ժխտում էր երկրորդ տորպեդի բաց թողնման տարբերակը: Այդ իսկ պատճառով երկրորդ պայթյունը գերմանացիները բացատրում են պայթուցիչ նյութերի դետոնացիայով եւ պնդում, որ այդ նյութերը ուղևորատար նավը պատրաստվում էր հասցնել Գերմանիայի դեմ պայքարող Անգլիային: Իսկ հարմարավետ լայները ուղղակի ռազմական նպատակների թողարկում էր:

Պայթյունի (կամ երկու պայթյունների) հետեւանքները սարսափելի էին: Նավի մեջ ջրածոցից ցածր բացվեց մի անցք, որով հանգիստ կարող էր անցնել գնացքը: Չրի հարյուրավոր տոննաներ հորդեցին Լուզիտանիայի մեջ:

Տախտակամածը մի պահ կարծես բարձրացավ եւ նորից նստեց: Ածուխի կտորներով, փայտի եւ պողպատի բեկորներով ջրի ու գոլորշու մի հսկայական սյուն աղմուկով դուրս պրծավ մեքենաների բաժնից:

Ու թեւ «արագության թագուհին» արդեն բավական թեքվել էր, հսկայական իներցիայի շնորհիվ այն շարունակում էր շարժվել առաջ: Նավապետ Թերները փորձում էր նավը դուրս բերել Քիմսելի հրվանդանի ծանծաղուտը: Հույսը դնելով Լուզիտանիայի բացառիկ ծովագնացական հատկությունների վրա՝ Թերները կարծում էր, որ նավը կկարողանա մոտ մեկ ժամ մնալ ծովի մակերեսին: Դա թույլ կտար իջեցնել նավակները եւ փրկել մարդկանց: Սակայն իրականում գործերը շատ ավելի վատ էին: Երբ նավն սկսեց թեքվել աջ կողմի վրա, դրա 20 մետրանոց խողովակներն ընկան տախտակամածին

սպանելով սարսափից դետուրեն նետվող մարդկանց:

Առաջացած խուճապի պայմաններում փրկարարական նավակների իջեցման ժամանակ Լուզիտանիայի անձնակազմի սպաները թույլ տվեցին անուղղելի մի սխալ: Նրանք հաշվի չառան, որ նավը դեռ շարունակում է իներցիայով շարժվել առաջ, եւ հենց որ նավակներն իջեցվեցին, ջրի ուժեղ հոսքը նավակները խփեց լայների պողպատե կողին: Նավակները շրջվեցին, իսկ այնտեղ գտնվող գրեթե բոլոր մարդիկ մահացան:

Շուտով Լուզիտանիայի քթամասն ամբողջությամբ անցավ ջրի տակ, եւ վայրկյաններ անց հսկայական նավն անհետացավ Ատլանտիկայի սառը ջրերում:

Եթե փոխանցված օգնության ազդանշանը հասցրել էին ընդունել Իռլանդիայի առափնյա մի քանի ռադիոկայան եւ մոտակայքում գտնվող նավերը: Շատերը շտապեցին օգնության, բայց այդպես էլ չկարողացան հասնել անհրաժեշտ վայր: Նորից հայտնվեցին գերմանական սուզանավերը, եւ որոշ փրկարարներ նախընտրեցին լքել վտանգավոր դարձած տարածքը:

Ավելի ամուր նյարդեր ունեւոր Կատարինա բեռնատար նավի նավապետը: Նա, ուշադրություն չդարձնելով թշնամու սուզանավերի ներկայությանը, կարողացավ փրկել մի քանի տասնյակ մարդու:

Բոլոր փրկվածներին տեղավորում էին Իռլանդիայի Քուինսթաուն նավահանգստում: Տիտանիկի կործանումից հետո սա ծովային ամենախոշոր աղետն էր, որն ընդամենը 18 րոպեի ընթացքում խլեց 1198 մարդկային կյանք:

Լուզիտանիայի կործանման ժամանակ գրանցվել էր արտասովոր մի դեպք: 1927 թվականին ուժեղ փոթորիկի ժամանակ Ատլանտիկայում խորտակվեց Քելտիկ նավը: Փրկվածների մեջ էր Մուռեյ ազգանունով տարեց մի անգլուհի: Եվ որքան մեծ էր լուսաբորոնքի գարնանը, երբ նրանք իմացան, որ 1915 թվականին տիկին Մուռեյը եղել է նաեւ Լուզիտանիայի կործանումից փրկվածների ցուցակում: Բայց դա դեռ ամենը չէ: Պարզվեց, որ այս անգլուհին ճանապարհորդել է նաեւ տխրահռչակ Տիտանիկով եւ դարձյալ հանգամանքների երջանիկ զուգահեռությամբ կարողացել է փրկվել:

Ինչ վերաբերում է Ալֆրեդ Վանդերբիլթին, ապա ըստ ակնմատենների՝ ամերիկացի միլիոնատերն օգնում էր կանանց եւ երախաներին տեղավորվել փրկանավակներում: Սա Վանդերբիլթի վերջին ճանապարհորդությունն էր: Հետաքրքիրն այն է, որ 1912 թ. ապրիլին Վանդերբիլթը պատրաստվում էր մասնակցել Տիտանիկի առաջին (եւ վերջին դարձած) ուղևորությանը, բայց վերջին պահին մտափոխվել էր: Ինչպես ասում են՝ ճակատագրից չես փախչի:

Կայուն զարգացում. աղետների վրանգի նվազեցման միջազգային ռազմավարության իրականացումը

Սկիզբը նախորդ համարներում (ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույցից)

Բ. Հանուն քաղաքների, դպրոցների եւ հիվանդանոցների անվտանգության
37. Հաշվի առնելով աղետներին նպաստող անբարենպաստ գործոնները, որոնք կապված են արագ ուրբանիզացիայի հետ, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ հարկավոր է տեղական մակարդակով ամրապնդել ներուժը եւ ակտիվացնել ղեկավարության գործողությունները, Ռազմավարության քարտուղարությունը կորոշի մարտից 2010-2011 թթ. աղետների վտանգի նվազեցմանն ուղղված Համաշխարհային արշավի կազ-

մակերպումն ու անցկացման սկիզբը, որի կարգախոսն է՝ «Բարձրացնել քաղաքների կենսունակությունը. իմ քաղաքն արդեն պատրաստվում է»: Կորեայի հանրապետության Ինչխոն քաղաքում 2009 թ. օգոստոսին տեղի ունեցած եւ զանգվածային լրատվամիջոցներով լայնորեն լրատված Միջազգային կոնֆերանսի մասնակիցները միահամուռ համաձայնության եկան, որ արշավը կազմակերպվել է աշխատելու համար քաղաքապետների, քաղաքային խորհուրդների եւ տեղական կառավարման մարմինների հետ՝ նրանց հնարավորություններն ընդլայնելու եւ ներուժն ամրապնդելու նպատակով: Տեղական կառավարման մարմիններին աջակցություն է ցուցաբերվում այն հաշվով, որ նրանք էլ ավելի ակտիվորեն քա-



րոզեն քաղաքներում աղետների վտանգի նվազեցման հնարավոր տարբերակները. ավելի հաստատուն վարեն որդեգրած քաղաքակառուցությունը եւ նախատեսեն ֆինանսների առանձնացումն ուղղված աղետների վտանգի նվազեցման միջոցառումներին տեղական բյուջեների զարգացման նպատակներով ծախսելիք միջոցների շրջանակներում. ինչպես նաեւ՝ աջակցեն լայն շրջան-

ների ընդգրկմանը քաղաքների զարգացման գործունեության պլանավորման մեջ: Ռազմավարության քարտուղարությունն ապահովել է տեղեկատվական-քարոզչական միջոցառումների կորդինացիան եւ համախմբել գործընկերներին ու քաղաքական ղեկավարությանը տեղերում իշխանական կառույցների միջեւ տեխնիկական համագործակցության եւ պրակտիկ գործունեության առաջավոր փորձի փոխանակման լավագույն տարբերակների հայտնաբերման ու վերլուծության միջոցով: 2010 թվականի արշավն սկսեց իրականացվել համաշխարհային մասշտաբով եւ տարածաշրջաններում, որին քաղաքներում ստորագրահավաքների եւ ուսուցողական միջոցառումների հատուկ արարողակարգեր նվիրվեցին: 2010 թվականի հուլիսին արշավին միացել էր 60 քաղաք, ներառյալ Պորտ-օ-Պրենսը, Սեիսիկոն, Դելի, Կոլումբոն եւ Կիտոն:

Շարունակելի



Վախը խանգարում է, թե՛ օգնում

Մ Վախը մեր գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ հույզերից մեկն է: Վախը միևնույն ժամանակ եւ՛ դրական, եւ՛ բացասական ազդեցություն է ունենում անձի վրա: Եթե մարդը կարողանա հասկանալ եւ ընդունել իր վախի գոյությունը, ապա կարող է շատ հեշտությամբ ուղիներ փնտրել այն հաղթահարելու համար:

իրականում գոյություն չունեն): Մեզ կարող է ամհանգստացնել եւ միաժամանակ վախեցնել նաեւ մեր ապագան, քանի որ այն անկանխատեսելի է եւ չգիտես դրանից ինչ սպասել: Կամ տեղի է ունենում այն, ինչը մենք չէինք սպասում եւ չէինք պլանավորում: Օրինակ՝ փողոցի մի անկյունից անսպասելի դուրս է գալիս մեքենան, որ չէինք նկատել: Այդ անսպասելի իրավիճակից մենք սարսռում ենք: Սա կենսաբանա-

վել, սկսում ես ակտիվանալ եւ կողմնորոշվում ես՝ ինչպես քեզ դրսևորել, այդ ժամանակ վախը «փոքրանում է»:

Ծիծաղը ընդդեմ վախի

Ծիծաղը հիանալի տարբերակ է, բայց՝ ոչ միակը: Որպես կանոն, մենք ինտուիտիվ միջոցներ գտնում ենք վախը հաղթահարելու համար: Եթե վախը գիտակցված չէ, ապա կարելի է

նում: Շատ ֆոբիաներ ունեն հիմնավորված պատճառներ, քանի որ հնուց եկած վտանգ կա, որ միջատները կարող են մարդուն վնասել, եւ մենք չենք ուզում, որ նրանք դիպչեն անգամ մեր մաշկին: Սակայն հաճախ ֆոբիաները չունեն հիմնավոր պատճառներ: Օրինակ՝ վախ մոխրագույն կամ սեւ մեքենաներից: Յնարավոր է՝ մարդն ունեցել է բացասական փորձ այդ ամենի հետ կապված, օրինակ՝ նա մի կերպ է խուսափել մոխրագույն մեքենայի տակ ընկնելուց: Այս դեպքում վախը հիմնավորված է, այն արմատավորվել է մարդու հոգեկանում եւ ամեն անգամ, երբ ինչ-որ բան մոխրագույն մեքենա է հիշեցնում, մարդու մեջ վախի անկառավարելի նշաններ են դիտվում:

ապա նրա վախն աստիճանաբար կթուլանա:

Վախը վերահսկելու 5 միջոց

1. Մարմնում առաջացած լարվածությունը հանելու համար շարժեք ձեր ուսերը, մատները, շարժեք դեմքի եւ մարմնի մնացած հատվածների մկանները: Շնչեք դանդաղ եւ խոր, տեղափոխեք ձեր հայացքը, որպեսզի հնարավորինս շատ առարկաներ եւ իրեր տեսնեք ձեր շուրջը:

2. Մարմնի համար հեմարան գտեք, օրինակ՝ հենվեք պատին: Հիշեք ամենահիանալի եւ գեղեցիկ վայրը, ուր երբեւէ եղել եք, կամ հիշեք այն պահը, երբ դուք լիարժեք երջանիկ եք եղել, պարզեւտրվել եք ձեր նախագծի համար, կամ շատ լավ հանգստացել եք ծովում եւ այլն: Ակտիվացրեք այդ հիշողությունները, լավ հիշեք գույները, ձայները, մարմնական զգացողությունները: Այս ամենը ձեզ կօգնի, որ դուք վերագտնեք ձեզ եւ ուժ հավաքեք:

3. Ջրեք ծաղիկները, խաղացեք ձեր ընտանի կենդանիների հետ, սպասեք լվացրեք, սրեք մատիտները եւ այլն: Կան շատ այլ գործողություններ, որոնք ձեզ կօգնեն մի պահ լիցքաթափվել, չեղել ձեզ վախի իրական օբյեկտից, մոռանալ, որից հետո քայլեր կձեռնարկեք՝ առանց շտապելու:

4. Փորձեք հնարավորինս քիչ հեռուստացույց նայել:

5. Փնտրեք ժպտալու, ուրիշներին օգնելու առիթ:

Հիշեք՝ ինչ էլ որ կատարվի ձեր կյանքում, ինչ դժվար իրավիճակում էլ որ դուք հայտնվեք՝ լուծում անպայման կա, եթե դուք իսկապես ուզում եք այդ հարցը լուծել: Դուք ինքնորոշված եք վերահսկել եւ ուղղորդել ձեր սեփական հոգեկան գործունեությունը:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդակցող

Ձեր հարցերը հոգեբանին
կարող եք ուղարկել
hogeban@emergency.am էլ.
հասցեով:

Ի՞նչ է վախը

Հույզ, որը մեզ օգնում է կողմնորոշվել առաջացած իրավիճակում եւ պաշտպանել սեփական անձը վտանգավոր իրավիճակներում: Վախեցնալիս մեր ինտելեկտը որպես այդպիսին չի ակտիվանում, քանի որ այն իր տեսակով ավելի ուշ ակտիվացող հոգեկան գործընթաց է: Յուրաքանչյուր մարդ ծնված օրվանից ունի վախի նվազագույն ֆոնային մակարդակ, որն ստիպում է ամեն վայրկյան սթափ լինել: Այս մեխանիզմը ձեւավորվել է դեռեւս շատ վաղնջական ժամանակներում, երբ մեր նախնիներն ապրում էին վայրի բնության մեջ, ու եթե նրանք չունենային վախի զգացողություն, ապա զոհ կդառնային վայրի կենդանիներին: Մարդը կյանքի ընթացքում հարմարվում է այդ ֆոնային վախին, եւ չի նկատում դրա առկայությունը իր առօրյա կյանքում: Վախը գործում է մի շարք պաշտպանական մեխանիզմների հետ մեկտեղ, սակայն եթե որեւէ մեխանիզմ թուլանում է, ապա մարդու մեջ դիտվում է տագնապային խանգարում, կաշուն մտքեր, ֆոբիաներ, այսինքն ոչ կառուցողական վախ, որն էլ միշտ հաղթանակած է դուրս գալիս:

Ի՞նչն է վախ առաջացնում

Մարդու համար վտանգավոր իրավիճակը կարող է լինել ինչպես իրական, այնպես էլ մտացածին (օրինակ՝ մարդը վախեցնում է հոգիներից, կամ մտացածին այլ երեւույթներից, որոնք



կան մեխանիզմ է, որն ունեն նաեւ կենդանիները: Այդ ժամանակ մեր բոլոր մկանները լարվում են եւ մեզ դողում են արագ գործելու: Մենք այդ պահին չենք կողմնորոշվում, թե ինչ անել՝ փախչել, մնալ տեղում, թե հարձակվել: Անկախ մեր որոշումից, ակտիվացած մկանները մեզ անհրաժեշտ են:

Վախը բացասական հույզ է...

Այդ զգացումը մեզ համար տհաճ է: Մենք չենք ուզում վախեցնալ, փորձում ենք հնարավորինս արագ փոխել իրավիճակը եւ ապահով վայրում հայտնվել: Եթե այն մեզ հաճելի լիներ, ապա մենք դրա վրա ուշադրություն չէինք դարձնի: Հաճախ են ասում, երբ մարդը գիտի ինչից է վախեցնում, ավելի հեշտ է վերահսկել իրավիճակը, քան՝ երբ չգիտի, քանի որ անորոշության մեջ մարդը վախեցնում է ամեն ինչից, եւ չգիտի ինչից պաշտպանվել: Երբ գիտես ինչից պաշտպան-

խոսել այդ մասին, ուսումնասիրել այնքան ժամանակ, մինչեւ որ պատճառները գիտակցվեն: Տարբերակներից մեկն է նաեւ՝ արժեզրկել վախը: Օրինակ՝ եթե դուք վախեցնում եք, որ ձեր երեխան փողոց անցնելուց վրաերթի կենթարկվի, ապա ավելի լավ է շատ ժամանակ հատկացնեք երեխային երթևեկության կանոններին ծանոթացնելու համար, զգուշացնեք, որ լինի ուշադիր, եթե նույնիսկ փողոցն անցնում է կանաչ լույսի տակ:

Ֆոբիաներ

Դրանցից է, օրինակ, միջատներից վախեցնալը: Մեզանից յուրաքանչյուրին միջատները տհաճություն են պատճառում, օրինակ՝ եթե միջատ տեսնեմ, կամ այն ընկնի ինձ վրա, մի կողմ կնետեմ եւ կմոռանամ այդ մասին: Իսկ երբ մարդն ուշաթափվում է նույնիսկ միջատի տեսքից, ապա դա արդեն ֆոբիա է, երբ ամեն մի փոքրիկ դրդող հանգամանք վախ է առաջաց-

Մանկական վախեր

Այն առաջանում է ծնված օրվանից, երբ դեռեւս ձեւավորված չեն հոգեկան պաշտպանական մեխանիզմները: Երեխաները վախեցնում են այն ամենից, ինչը կարող է վտանգել իրենց կյանքը՝ մթությունից, բարձրությունից: Եթե երեխան վախեցնում է, օրինակ՝ «մեշուկ պապիկից», կախարհից եւ նմանատիպ այլ կերպարներից, ապա դա ծնողների եւ նրան շրջապատող մեծահասակների «շնորքն» է: Շատ հաճախ ծնողները երեխային կառավարելու եւ վերահսկելու համար նրան վախեցնում են այդ կերպարներով՝ չգիտակցելով, որ այդ ամենը կարող է արմատավորվել երեխայի մեջ եւ, վերափոխվելով, դրսևորվել այլ վախի տեսքով:

Ի՞նչն է օգնում հաղթահարել վախը

Վախը հաղթահարելու տարբերակներից է երեխային վախեցնող օբյեկտի հետ ծանոթացնելը: Օրինակ՝ եթե երեխան վախեցնում է փոշեկուլի ձայնից, ապա ցանկալի կլինի նրան մոտիկից ծանոթացնել այդ օբյեկտի հետ: Երբ երեխան տեսնի, թե ինչ է իրենից ներկայացնում փոշեկուլը եւ որ այն վտանգավոր չէ,

Երեխաների համար

Կարիես անուևով հրեշը

Բոլոր երեխաներն էլ սիրում են շոկոլադե, կոնֆետներ, պաղպաղակ, խմորեղեն եւ այլ քաղցրավենիք, եւ որքան էլ ծնողները փորձեն նրանց զգուշացնել, որ դրանք շատ վտանգավոր են ստամոքսի համար, երեխաները չեն կարող հրաժարվել այդ հաճույթից: Առանց քաղցրեղենի կյանքն, իհարկե, դառն է թվում, սակայն առանց ստամոքսի այն կարող է ավելի վատ լինել: Ահա մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն փոքրիկներին պահպանելու ստամոքսը:

* Ատամները պետք է մաքրել առնվազն օրը երկու անգամ՝ առավոտյան նախաճաշից հետո եւ երեկոյան ընթրիքից հետո:

* Իսկ եթե չծուլանաք եւ ատամները մաքրեք նաեւ ցերեկը՝ ճաշից հետո, ապա շատ ավելի լավ կլինի:

* Ատամի խոզանակը պետք է շարժել եւ՛ հորիզոնական, եւ՛ ուղղահայաց ուղղություններով՝ աշխատելով մաքրել ատամյան բոլոր ատամները, այլ ոչ միայն նրանք, որ երեւում են առջևից:

* Չի կարելի խոզանակը շատ

ուժեղ սեղմել. չէ՞ որ մաքրում եք սննդի մնացորդները, այլ ոչ թե ատամի էմալը:

* Երեք - չորս ամիսը մեկ անհրաժեշտ է հին խոզանակը փոխարինել նորով: Գնված խոզանակն անպայման պետք է լինի հերմետիկ, փակ փաթեթավորմամբ, երեխայի տարիքին համապատասխան եւ փափուկ մազիկներով:

* Փոքրիկներն ատամները պետք է մաքրեն մանկական մածուկով, որն ավելի համեղ է, ինչը սակայն չի նշանակում, որ այն կա-



րելի է կուլ տալ:

* Բացի այդ, նրանց ատամների էմալն ավելի նուրբ է ու բարակ, քան մեծահասակներինը:

* Մի՛ գլացեք տարին երկու անգամ երեխային տանել ատամնաբույժի մոտ՝ ստուգման: Դա բոլորովին էլ սարսափելի չէ:



Զգուշացե՛ք թունավոր սնկերից



Սունկ հավաքելու համար պարտադիր չէ անտառ կամ դաշտ զնալ. քաղաքներում էլ են սնկեր աճում: Դա է վկայում 56-ամյա Ռուբենի փորձը, որն արդեն երկար տարիներ սունկ է հավաքում, տանում տուն, եփում եւ հյուրասիրում ընտանիքի անդամներին:

- Մեծ աղջիկս սնկի սիրահար է, անհամբերությամբ է սպասում այն օրերին, թե երբ է ամձրել գալու: Խոնավ եղանակին զնում են սունկ հավաքելու: Սնկերը թաքնված են լինում չորացած տերեւների տակ, հողի ճեղքի մեջ էլ կարող ես աճող սունկ տեսնել: Հիմնականում հանդիպող սնկերից են ծառի վրա աճող եւ շամպինյոն սունկը: Սպիտակ սունկը՝ շամպինյոնը, ծառի սնկերը, շատ տարածված են Իջեւանում, Դիլիջանում, Սեւանում: Շատ համեղ է ընկույզի ծառի վրա աճող սունկը: Շամպինյոնը հավաքելուց պետք է ուշադիր լինել. կան դրան շատ

նման սպիտակ սնկեր, որոնք թունավոր են: Ոչ թունավոր սնկերի ներսի կողմը բաց շագանակագույն, վարդագույն երանգի է լինում, - պատմում է սնկերի սիրահարը:

Ռուբենը մասնագիտությամբ շինարար է: Նա պատմում է, որ դպրոցական գրքերից է սովորել ուտելի սնկերը տարբերել թունավորներից: Ըստ նրա՝ չի եղել այնպիսի դեպք, որ իր հավաքած սունկը թունավոր լինի:

- Եթե կասկածում եմ, ուղղակի չեն հավաքում: Բայց ինչքան էլ վստահ լինեմ, եփելուց գլուխ սոխ եմ զցում, եթե սոխը կապտում է, ապա սունկը թունավոր է, - ասում է Ռուբենը:

Իսկ ահա թիվ 15 պոլիկլինիկայի բժշկուհի Մարինե Վարդանյանը հակառակն է պնդում.

- Մոլորություն է կարծել, թե սնկի թունավոր լինելը կարելի է պարզել արծաթի, սոխի կամ սխտորի միջոցով: Կա թունավորումից խուսափելու միայն մեկ

վստահելի միջոց՝ պետք է ճանաչել սունկը: Բացի այդ, նույնիսկ անվնաս սնկերը նախօրոք պետք է պահել ջրի մեջ, ապա նախապես եփել, ջուրը թափել, հետո միայն անցնել պատրաստելուն: Չի կարելի օգտագործել նախորդ օրերին եփված սունկը, իսկ վատ զգալիս պետք է անմիջապես դիմել բժշկի:

Հայաստանում ամենաթունավոր սնկերն են դժգույն պոգանկան, ճանճասպանը եւ այլն: Այս սնկերից թունավորման դեպքերի 70%-ը, նույնիսկ բժշկական միջամտությունից հետո, մահացու է:

- Մինչ այսօր գրանցված թունավորման դեպքերը եղել են չիմացության հետեւանքով: Հավաքում են մայրուղու շրջակայքում աճող սնկեր, որոնք շրջակա միջավայրի աղտոտումից են թունավորված: Եղել են դեպքեր, երբ նույն մարդը միեւնույն վայրից մի քանի տարի սունկ է հավաքել, իսկ այս տարի սունկը թունավոր է եղել, - ասում է Առողջապահության նախարարության հիգիենիկ եւ համաճարակային տեսչության սնուցման եւ սննդամթերքի անվտանգության բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Հունանյանը:

Առողջապահության նախարարության վերը նշված տեսչությունը զբաղվում է քարոզչության միջոցով ժողովրդին զգուշացնելով, որ չճանաչելով չհավաքեն, ամձանոթ վայրերից ու մարդկանցից չզննեն չստուգված սունկ: Այդ ձեւով իսկ, չվտանգեն իրենց կյանքը:

Աբովյան քաղաքում թունավորման դեպք է գրանցվել, երբ տատիկը թռան համար սեւ

սունկ է հավաքել եւ եփել: Շատ դեպքեր էլ լինում են, երբ բակերից կամ այլ տեղերից են սունկ զնում, սեփական կյանքը վստահելով մարդկանց, ում նույնիսկ չեն էլ ճանաչում:

Գյուղատնտեսության նախարարության անասնաբուժության եւ սննդամթերքի անվտանգության բաժնի պետ Արթուր Վարժապետյանը վստահեցնում է, որ իրենք վերահսկում են շուկաներում սնկի վաճառքը:

- Սկզբում արտաքին ճանաչելիությամբ է պարզվում սունկը թունավոր է, թե՛ ոչ: Կասկածի դեպքում սունկն ուղարկվում է տրեսիկոլոգիական զննության: Պարբերաբար մոնիտորինգ է իրականացվում, ստուգվում է սնկի վաճառքի օրինականությունը: Իսկ 2009 թ. մայիսից սնկի վաճառքի կասեցում է տեղի ունենում եւ մինչ օրս թունավոր սնկի հայտնաբերման դեպքեր չեն գրանցվել: Վտանգավոր է սնկի բակային վաճառքը, դա մեր կողմից հնարավոր չէ վերահսկել, այդ իսկ պատճառով, խորհուրդ է տրվում խուսափել բակերից սունկ գնելուց, - ասում

է Ա. Վարժապետյանը:

Չնայած իրականացվող աշխատանքներին՝ սնկի սեզոնն սկսվելուն պես սկսվում են մարդկանց զանգվածային թունավորումները: Ինչպես տեղեկացնում են Առողջապահության նախարարության հիգիենիկ եւ համաճարակային տեսչության սնուցման եւ սննդամթերքի անվտանգության բաժնից, մինչ օրս արձանագրվել է սնկային թունավորման 21 դեպք՝ 35 տուժածով, արդյունքում 4 երեխա է մահացել: Մահացու դեպքերից երեքը Կոտայքի մարզից են, մեկը՝ Երեւանից: Սունկը հավաքված է եղել նույն վայրից՝ Կոտայքի մարզի Չորաղբյուր գյուղից: Այս տարի գրանցվել է մինչեւ 14 տարեկան երեխաների թունավորման 11 դեպք:

Թունավոր սնկերն այս տարի շատ տարածված են Կոտայքի, ապա Արմավիրի մարզում, 2009 թ. առաջին տեղում էր Լոռու մարզը:

Անի Դանիելյան
ԵՊՀ Ժուռնալիստիկայի
Ֆակ., 4-րդ կուրս

Սննդային թունավորման առաջին նշաններն են հանկարծակի դողը, գլխացավը, մկանային ցավը, բարձր ջերմությունը, սրտխառնոցը, անդադար փսխելը, սաստիկ լուծը: Կարող է լինել պարզապես միայն սրտխառնոց, միայն փսխում, միայն լուծ, բայց անպայման ջերմություն: Այն կարող է լինել եւ բարձր, եւ ոչ այնքան: Սննդային թունավորման դեպքում ամենավտանգավորը մարդու օրգանիզմի կտրուկ ջրազրկումն է: Ուստի չափազանց կարեւոր է ամմիջապես վերականգնել օրգանիզմում ջրաէլեկտրոլիտային բալանսը:

Նախեւառաջ պետք է վաճառ ստամոքսը (խմել հնարավորինս շատ ջուր՝ մանգանեզիումի բյուրեղիկով, զուստ վարդագույն): Այնուհետ մատը մտցնել բերանն ու փորձել սրտխառնոց առաջացնել: Ակտիվացրած ածուխ ընդունել: Խմել մեծ քանակությամբ սովորական եռացած ջուր, ցանկալի է՝ հանքային (առանց գազի):

Տիեզերական տեխնոլոգիաները կօգնեն գնահատել անառների դերը ածխածնի արդանեւորման գործընթացում

Արդեն վաղուց հայտնի է, որ անտառների հատումն ուղեկցվում է մթնոլորտ ածխածնի արտանետումներով: Շատ մասնագետների կարծիքով ածխաթու գազի այդ արտադրումը ամենավերջին դերը չի կատարում գլոբալ տաքացման գործընթացում: Դրա համար էլ վերջերս մեծ ուշադրություն է դարձվում ծառերի բներում ածխաթու գազ պարունակելու հատկության ուսումնասիրմանը:



Կարելի է հետեւել ռեալ ժամանակում՝ տիեզերքից ստացվող տեղեկատվությանը գուգահեռ:

Կիրառելով այս տեխնոլոգիան՝ Գրեզը գնահատել է անտառների հատման հետեւանքով ածխածնի պոտենցիալի եւ արտազատման գործընթացը՝ պերուական Ամազոնիայի արեւադարձային անտառների 45 000 քառ. կմ մակերեսում:

Հաշվարկները ցույց են տվել, որ անտառները, որոնք աճում էին հետազոտվող տարածքում, «միահյուսել են» ընդհանուր առմամբ 395 միլիոն տոննա ածխածին, իսկ անտառահատումների արդյունքում ամեն տարի 630 000 տոննա ածխաթու գազ է արտանետվում մթնոլորտ, ինչը կազմում է տարածաշրջանում CO₂-ի արտանետման մեկ երրորդը:

Եգիպտոսի տարածքում պալեոկլիմայագետները հիմնավորը լին են հայտնաբերել: Այն սնվում էր Նեոլիթի վտակներից, բայց չորացել էր մոտ 80 հազար տարի առաջ, երբ կլիման դարձել էր շոգ ու չոր:

Սահարան միշտ չէ անապատ եղել: Գոյություն ունի վարկած, որ մոտ 5 մլն տարի առաջ կլիման այս տարածքում դարձել է չորային: Այնուհետեւ հաջորդել են կլիմայական տատանումները. մեկ ավելի խոնավ ու տաք, մեկ ավելի չոր ու սառը: Բայց այնուամենայնիվ անապատի ձեւավորման համար շատ ավելի երկար ժամանակ պահանջվեց: 2008 թ. Քյոլնի համալսարանի գիտնականների խումբը եկավ այն եզրակացության, որ Սահարան միայն վերջերս է անապատի վերածվել՝ մոտ 2700 տարի առաջ: Մինչ այդ տարածաշրջանը ծաղկող օազիս էր հիշեցնում՝ բազմաթիվ լճերով ու հարուստ բուսականությամբ:

Լիճն անապատում

Դոկտոր Թեդ Մաքսվելը՝ Սմիթսոնյան ինստիտուտից, գործընկերների հետ միասին եւս մի հետաքրքիր փաստ է բացահայտել Սահարայի պատմությունից: Վերլուծելով բարձրորակ տոպոգրաֆիկ լուսանկարները, որոնք ար-


Եգիպտական անապատը 250 հազար տարեկան լիճ էր թաքցնում

բանյակից ստացվել են 2000 թ., գիտնականները եզրակացրել են, որ Եգիպտոսի հարավում մոտ 250 հազար տարի առաջ լիճ է եղել՝ հարուստ ջրահոսքերով:

- Լճի խորությունը հասնում էր 274 մետրի, իսկ տրամագիծը մոտ 350 կմ էր: Հետաքրքիր է, որ նույն վայրում 1980 թ. հիմնավորը ձկան մնացորդներ են հայտնաբերվել: Սա եւս մի ապացույց է, որ այս տարածքում ջրամբար է եղել, - ասում է Մաքսվելը:

Գիտնականները կարծում են, որ ջուրը լիճ էր լցվում Նեոլիթի վտակներից, իսկ այլ աղբյուրներ պարզապես չեն եղել: Հենց ջրի հոսանքի հետ էլ, Մաքսվելի խոսքերով, լիճ էին ընկնում կենդանիներ, այդ թվում եւ 1980 թ. հայտնաբերված ձուկը: Հիպոթեզի ապացույց է ծառայում եւ այն, որ լճի մակարդակը զգալիորեն ցածր է Նեոլիթի մակարդակից:

Մաքսվելի խոսքերով, իզոտոպային անալիզը թույլ է տվել պարզել, որ լիճը հայտնվել է մոտ 250 հազար տարի առաջ, բայց երկար կյանք չի ունեցել: Մոտ 80 հազար տարի առաջ այն ամբողջությամբ չորացել է: Այնուհետեւ ուժեղ քա-



միներն աստիճանաբար այն ծածկել են ավազի հաստ շերտով:

Ինչպես նշում են հեղինակները, պլիոցենի ժամանակ ներկայիս 2ադի, Սուդանի ու Լիբիայի տարածքում բազմաթիվ լճեր կային: Եգիպտոսի տարածքում սա հայտնաբերված այդ տարիքի դեռեւս միակ լիճն է: Ինչպես ասում է Մաքսվելը, նման լճեր այսօր էլ են ձեւավորվում: Օրինակ, 1998 թ. Եգիպտոսի հարավային մասում Նեոլիթի հեղեղումների ժամանակ, մոտավորապես նույն շրջանում, որտեղ գտնվում էր պալեոլիճը, մի քանի ոչ մեծ լճեր էին գոյացել: Իհարկե, դրանք երկար չէին գոյատևել եւ 2003 թ. չորացել էին:

